

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

**ԵԱՀԽ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ**

*Տիգրան ԲԱԼԱՅԱՆ*

*ԵՊԴ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ*

**ԽԱՅՐԱ** փլուզումից հետո եվրոպական անվտանգության շրջանակները ներառեցին նաև նախկին խորհրդային հանրապետությունները, որոնք արդեն իսկ սկսված հակամարտությունների թատերաբեմ էին: Ի տարբերություն «սառը պատերազմի» շրջանի, հետխորհրդային տարածաշրջանում սկիզբ առած կոնֆլիկտային զարգացումներն ընգրկվեցին ԵԱՀԽ-ի անվտանգության հիմնախնդիրների օրակարգում, և եվրոպական այդ կառույցը սկսեց անմիջականորեն զբաղվել հակամարտությունների լուծմամբ իրեն անձանոթ, սակայն, աշխարհաքաղաքական առումով հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջանում:

ԵԱՀԽ գործունեությունը դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ընդունված է կապել այսպես կոչված Մինսկի խմբի գործունեության հետ: Մի գործունեությունը տարբեր գնահատականների է արժանացել, ինչպես դրական, այնպես էլ բացասական: Մեր կարծիքով, Մինսկի խմբի գործունեությունը, իհարկե, ուներ դրական կողմեր, սակայն շահերի ներքին բախումը, անդամների քանակը և մի շարք այլ հանգամանքներ խոչընդոտեցին նրա արդյունավետ գործունեությանը: Մինսկի խումբը ստեղծվեց այնպիսի պայմաններում, երբ Իրանի նախաձեռնած միջնորդական առաքելությունն արդեն որոշակի առաջընթաց էր արձանագրել, իսկ ԼՂ-ում անհամբեր սպասում էին ինչ-որ փոփոխությունների:

Վերոհիշյալ հանգամանքների բերումով մենք հակված ենք կարծել, որ Մի ստեղծմամբ ու գործունեությամբ արևմտյան երկրները հաջողեցին հաստատվել բնական պաշարներով հարուստ և աշխարհագրորեն Արևմուտքի և Արևելքի խաչմերուկում գտնվող կասպիական

տարածաշրջանում:

Տարօրինակ կլիներ, եթե արևմտյան երկրները չօգտվեին տարածաշրջանում ստեղծված հակասություններից և չփորձեին իրենց հեղինակությունն ու ազդեցությունը հաստատել, հետևապես նոր շուկայում հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ ֆորմալ խոչընդոտները վերացել էին, նույնիսկ հակառակը դրան նպաստող գործոններ էին առաջ եկել: Իսկ 30-ին թերևս Հայաստանը և Ադրբեջանը դարձան ԵԱՀԽ անդամներ, և ԵԱՀԽ գործող նախագահողին խնդրեցին պատվիրակություն ուղարկել տարածաշրջան ԼՂ հիմնախնդրի լուծման ուղիները ուսումնասիրելու նպատակով: Այդ հրավերը ձևական էր, քանզի, ըստ ավանդության, նոր անդամ ընդունելու պարագայում ԵԱՀԽ-ն պատվիրակություն է ուղարկում տվյալ երկրում իրավիճակին ծանոթանալու նպատակով:

Հակամարտության լուծման ուղիների որոնման նպատակով միջազգային հանրության ներգրավմանը Ադրբեջանը հենց սկզբից բացասաբար արձագանքեց, քանզի դարաբաղյան հիմնախնդիրը համարում էր Ադրբեջանի ներքին գործ՝ պնդելով, թե Ադրբեջանն ինքը պետք է լուծի այդ հարցը: Իսկ հիմնախնդրի լուծումը Ադրբեջանը պատկերացնում էր այնպես, ինչպես երիտթուրքերը 20-րդ դարասկզբին իրագործեցին Հայկական հարցի լուծումը՝ ցեղասպանության և բնակչության բռնի տեղահանման միջոցով:

Այլ էր Հայաստանի ղեկավարության դիրքորոշումը, որը հիմնախնդրի միջազգայնացումը դիտում էր որպես դրա լուծման պարտադիր նախապայման՝ շեշտը դնելով մարդու իրավունքների պաշտպանության և ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքների վրա:

1990 թվականից Ղարաբաղը ենթարկվում էր ԽՍՀՄ ներքին գործերի և ադրբեջանական ՕՍՕՆ-ի պատժիչ «արշավանքներին» ու վայրագություններին, իսկ ավելի ուշ նաև ծանր իրետանային տեխնիկայի ռմբակոծումներին: Հիմնախնդրի միջազգայնացումը միջոց էր սևեռելու միջազգային հանրության ուշադրությունը ԼՂ-ին տիրող դրբերգական իրավիճակի վրա:

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

ԼՂ իշխանությունները հարցի միջազգայնացմամբ հուսով էին հասնել «հումանիտար ինտերվենցիայի»: առաջին հերթին ապաշրջափակման, արտաքին աշխարհի հետ կապի հաստատման և, վերջիվերջո, հարցի քաղաքական լուծման: ՄԱԿ-ի կանոնադրության և ԵԱՀԽ Դե-սինկիի եզրափակիչ Ակտի ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի վրա հիմնվող հիմնախնդրի լուծման: Այստեղ ցանկանում ենք ընգծել, որ ԼՂ անկախացման գործընթացն ամբողջովին համապատասխանում է ընդունված միջազգային նորմերին և 1991 թ. վերջին դեռևս գործող ԽՍՀՄ օրենսդրությանը: Սակայն ԼՂ անկախացման իրավական հիմնադրույթն այս աշխատության ուսումնասիրման առարկան չեն և մենք այդ հարցին կանդիդատականք զուտ այս կամ այն պնդումը պատճառաբանելու անհրաժեշտության դեպքում:

Ղարաբաղյան հակամարտության մեջ ներգրավված կողմերի դիրքորոշումների իրարամերժության պայմաններում ԵԱՀԽ-ն, առանց հապաղելու, օգտագործեց առաջին իսկ հնարավորությունը և հանձն առավ հիմնախնդրի լուծման նախաձեռնությունը:

1992 թ. փետրվարի 12-18-ը ԵԱՀԽ գործող նախագահողի հանձնարարությամբ այդ կազմակերպության պատվիրակությունն այցելեց Հայաստան, Ադրբեջան և ԼՂ, որից հետո բավականին օբյեկտիվ գեկուցագիր ներկայացվեց տարածաշրջանում ստեղծված իրավիճակի, նրա զարգացման, տեղի ունեցած բռնությունների, փախստականների և հակամարտության անմիջական գոտում գտնվող քաղաքացիների դրության, հակամարտության նկատմամբ տարածաշրջանային երկրների դիրքորոշման, Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների միջնորդական նախաձեռնության և դրա անհաջողության մասին: Որպես հետագայում հակամարտության կարգավորման գործընթացում օգտագործվելիք տարրեր բերվում էին ժելեզնովողակի կոմյունիկեի դրույթները: Մեծ տեղ էր հատկացված հակամարտության գոտում ընթացող գործընթացներին և դրանց ազդեցությանը հակամարտության վրա: Ձեկուցագիրը կազմված էր անաչառ և արտահայտում էր իրերի իրական դրույթները տարածաշրջանում: Պատվիրակության անդամների ճշմարտություն գտնելու ձգտման մասին վկայում է այն փաստը, որ փետրվարի 13-ին, տարածաշրջան մեկնե-

լուց առաջ, նրանք Մոսկվայում հանիպեցին հակամարտությունը լուսաբանող մի խումբ լրագրողների, որոնց հետ զրույցները ևս արտացոլվեցին պատրաստվող փաստաթղթում:

Ձեկուցագրից պարզ էր դառնում, որ Հայաստանի իշխանությունները հարաժարվել են ԼՂ-ն Հայաստանին միացնելու գաղափարից, սակայն որպես երրորդ՝ շահարգոված կողմ, համաձայն են հարցի այնպիսի լուծմանը, որը կապահովեր ԼՂ-ում մարդու իրավունքների պաշտպանությունը և մարդկանց անվտանգությունը՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից: Միաժամանակ ՀՀ ղեկավարությունն անհրաժեշտ էր համարում հակամարտության լուծման ուղիների քննարկմանը ԼՂ ներկայացուցիչների մասնակցությունը: Ըստ Ձեկուցագրի Ադրբեջանի դիրքորոշումը միանշանակ չէր, քանզի այն մերժելով ԼՂ-ի հետ հավասար իրավունքներով բանակցությունները, այնուամենայնիվ, չէր բացառել ոչ պաշտոնական շփումները: Եզրափակիչ դրույթներում ԵԱՀԽ ԱՊԿ-ն կոչ էր անում անհապաղ դադարեցնել կրակը և քայլեր ձեռնարկել հրադադարը պահպանելու համար, հումանիտար կազմակերպություններին անմիջապես օգնություն ցուցաբերել, հակամարտության կողմերի վրա ազդեցություն ունեցող երկրներին օգտագործելու իրենց հեղինակությունը կրակը դադարեցնելու և բանակցություններ սկսելու համար: Ձեկուցագրի պահանջները հիմնականում կրկնում էն ժելեզնովողակի կոմյունիկեի դրույթները, որոնց մեծ մասը, սակայն, բարի ցանկությունների արտահայտություն էր:

Այս Ձեկուցագիրը ներկայացվեց փետրվարի 28-ին, Պրահայում տեղի ունեցած ԱՊԿ հանդիպմանը, որտեղ մասնակիցները Ձեկուցագրի դրույթներին համապատասխան կոչ արեցին ԵԱՀԽ անդամներին, ինչպես նաև Իրանին և արաբական երկրներին գերծ մնալ հակամարտող կողմերին զենքի մատակարարումներից, անհապաղ միջոցներ ձեռնարկել հումանիտար հարցերի լուծման համար և միջազգային հանրության առջև ստանձնած պարտավորություններին համապատասխան ապահովել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը: Հակամարտող կողմերից պահանջվում էր հարգել հարևանների տարածքային ամբողջականությունը: Այս դրույթը, փաստորեն, Հայաստանին էր վերաբերվում, քանզի որ Ադրբեջանը մեղադրում էր Հայաստանին ԼՂ հայերին հովանավորելու և ԼՂ-ն բռնազավթելու փորձերի մեջ:

ԱՊԿ նույն միտում ընդունվեց առաջին որոշումը ԼՂ վերաբերյալ: Այն հակամարտության լուծմանն ուղղված քայլերի և միջոցների մի ամբողջություն էր, որի հիմնական մասը կազմում էին կրակի դադարեցման, զինադադարի ամրապնդման, հումանիտար հարցերի կարգավորման, զինամատակարարումների դադարեցման կետերը, իսկ այնուհետև ենթադրվում էր սկսել բանակցությունները կողմերի համար ընդունելի որոշում կայացնելու նպատակով: Սակայն որոշումները ոչ միայն մնացին թրթի վրա, այլև անմիջապես սկսեցին խախտվել:

— ոչ մի առաջընթաց չարձանագրվեց ԼՂ ապաշրջափակման և հումանիտար միջանցք ստեղծելու առումով, դեռ ավելին՝ Հայաստանից ԼՂՀ մթերք հասցնող ուղղաթիռները թռչում էին ամեն անգամ զնդակոծության ենթարկվելով,

— չնայած զինամատակարարումները սահեցնելու կոչին՝ երրորդ հետաքրքրված երկրները չարունակեցին զինամատակարարումները, մինչդեռ այս դրույթը պահպանելու դեպքում զինված հակամարտությունը կարող էր թուլանալ և ավարտին մոտենալ, քանի որ հակամարտող կողմերից և ոչ մեկը չուներ ռազմական արդյունաբերություն և այդ առումով ամբողջովին կախված էր դրսի մատակարարումներից:

Հարկ է նշել, որ այդ ժամանակաշրջանում տեղի էր ունենում ԽՍՀՄ զինված ուժերի ունեցվածքի բաժանումը նախկին խորհրդային հանրապետությունների միջև, և Ադրբեջանին անցան ինչպես զենքի իսկայական պաշարներ, այնպես էլ կասպիական նավատորմի հեռահար հրետանու գույքը, որը գործի դրվեց ԼՂ բնակավայրերի զնդակոծման նպատակով:

Այսպիսի պայմաններում առավել քան տարօրինակ էր զինադադար հաստատելու կոչի տակ ստորագրած Ռուսաստանի վարքագիծը, որը մի կողմից կոչ էր անում այլ երկրներին դադարեցնել զենքի մատակարարումները, մյուս կողմից ակտիվորեն զբաղվում էր զենքի մատակարարմամբ: Ըստ ամենայնի Ռուսաստանի արտաքին գործերի և պաշտպանության նախարարությունները տարբեր հակառակ իմաստով էին ընկալում զենքի մատակարարումը դադարեցնելու վերաբերյալ դրույթը:

Վերլուծելով զեկուցագիրը և ԱՊԿ կայացրած որոշումը, պարզ է դառնում, թե ինչ սկզբունքների հիման վրա էր տեսնում հիմնախնդրի լուծումը ԵԱՀԽ-ն.

- տարածքային ամբողջականության պահպանում,
- ազգային փոքրամասնությունների իրա-

վունքների պաշտպանություն:

Վերջին դրույթը տարբեր ժողովուրդներ, ըստ իրենց մտածելակերպերի, տարբեր ձևով են ընկալում, իսկ առաջին դրույթն առավել քան պարզ էր բոլորին՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանում: Մինչդեռ Ղարաբաղում, ինչպես նաև Հայաստանում հիմնախնդրի միջազգայնացումը կապում էին ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքին համապատասխանող լուծման հետ: Եվ բացի դրանից, համաձայնելով ԵԱՀԽ-ի առաջարկած տարբերակին, փաստորեն, ամբողջովին ապարդյուն կդառնար ամբողջ պայքարը. ԼՂ-ն կվերադառնար այն կարգավիճակին, որն ուներ 70 տարի: Այստեղ հարկավոր է ընդգծել, որ ՀՀ նախագահի կողմից այդ ժամանակաշրջանում մի քանի անգամ փորձ արվեց հայ հասարակության դատին հանձնել հիմնախնդրի կարգավորման վերը նշված տարբերակը, որը բացասական արձագանք ունեցավ, իսկ ՀՀ նախագահի զինակիցներից մեկը ստիպված եղավ հրաժարական տալ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այս գործընթացները տեղի էին ունենում ԼՂ լիակատար շրջափակման և ռմբակոծությունների պայմաններում, և, ըստ երևույթին, կարծիք կար, որ ԼՂՀ-ն այլ ընտրություն չուներ և ստիպված կլինի համաձայնել առաջարկվող, ավելի ծիշտ՝ թելադրվող պայմաններին: Այս մասին է վկայում Մինսկի կոնֆերանսի հրավիրման նախապատմությունը, քանզի նրան կարճաժամկետ գործունեություն էր վերապահված: Ինչպես վկայում էր Վլադիմիր Կազիմիրովը՝ Մինսկի խումբը (ՄԽ) ստեղծվել էր տարերայնորեն, առանց որևիցե որոշման, իրականում ՄԽ-ի միակ նպատակն էր նախապատրաստել հունիսին բացվելիք Մինսկի Կոնֆերանսը և ոչ թե բանակցություններ վարել: Փաստորեն, Հայաստանը համամիտ էր միջազգային հանրության հետ և հույս ուներ ծանր դրության մեջ հայտնված ԼՂՀ իշխանություններին ստիպել կարճ ժամկետում անվերապահորեն ընդունել թելադրվող պայմանները:

Փորձենք ուսումնասիրել ՄԽ ստեղծման մանրամասները ու իրավիճակը հակամարտության գոտում և այդ ենթատեքստում ի հայտ բերել դարաբաղյան հակամարտության լուծմամբ զբաղվող երկրների հակասությունները, որոնք, մեր համոզմամբ, բանակցային գործընթացի արգելակման պատճառ դարձան:

ԵԱՀԽ շրջանակներում դարաբաղյան հիմնախնդրի հետագա քննարկումները հիմնականում համահունչ էին ԵԱՀԽ պատվիրակության

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ**

գեկույցի դրույթներին և սկզբունքներին, սակայն իրավիճակը հակամարտության գոտում օրեցօր փոփոխվում էր, և այս հանգամանքն անկասկած բացասաբար էր անդրադառնում ԵԱՀԽ խաղաղարար գործունեության վրա, որը, կարծես թե, ժամանակից հետ էր ընկնում:

Մարտի 13-14-ը Հելսինկիում կայացավ ԵԱՀԽ ԱՊԿ 8-րդ հերթական հանդիպումը, որի արդյունքում 10 կետից բաղկացած որոշում ընդունվեց ԼՂ հակամարտության վերաբերյալ: Ըստ ընդունված տեսակետի՝ հակամարտության գոտում ընթացող գործընթացների վերաբերյալ տեղեկատվության պակասը լրացնելու համար որոշվեց ևս մեկ պատվիրակություն ուղարկել տարածաշրջան տեղում իրավիճակին ծանոթանալու և ԵԱՀԽ գործող նախագահողի այցը տարածաշրջան կազմակերպելու նպատակով: Այդ այցի ընացքում, ըստ որոշման, Դինստբիքը պետք է օգտագործեր իր հեղինակությունն արդյունավետ զինադադար հաստատելու համար: Մարտի 14-ին ընդունված որոշումը հիմնականում կրկնում էր նախորդ որոշման դրույթները, ինչն արդեն ցուցադրում էր նախորդ որոշման անարդյունավետությունը: Նոր որոշման մեջ ընդգծված էր, որ դարաբաղյան հիմնախնդրի լուծումը ԵԱՀԽ-ից պահանջում է ավելի գործուն և արդյունավետ ջանքեր գործադրել: Սա, փաստորեն, նշանակում էր, որ խնդիրը բարձրացվում է ավելի բարձր մակարդակի վրա: Այս փաստաթղթի 6-րդ կետի որոշ դրույթներ, մեր կարծիքով, ի վիճակի էին կանգնեցնել օրըստօրե ուժգնացող հակամարտությունը և որոշում ընդունողները պետք է հետևողականորեն հետամուտ լինեին դրա իրագործմանը: Խոսքը զինադադարը վերահսկելու նպատակով դիտորդների տեղեկայման մասին է, որի վերաբերյալ որոշումը, բազմաթիվ այլ որոշումների մեծ, մնաց թղթի վրա, քանզի դրա իրագործման համար նախատեսված կամ ապահովված չէր և ոչ մի կառուցակարգ կամ միջոց: Մեր համոզմամբ տարբեր մակարդակների այցերի վրա ծախսվող միջոցներն ու ջանքերը հակամարտության գոտում տարաբնույթ միջոցառումների՝ բանակցությունների, դիտորդների տեղաբաշխման և հակամարտության կարգավորմանը նպաստող այլ միջոցառումների իրագործման մեջ ներդրվելու դեպքում առավել շուշափելի առաջընթաց կարձանագրվեր: Եվ այս ամենը իրականացնելու համար մեծ միջոցներ

չէին պահանջվում, քանի որ մարտի 20-ին ԱՊՀ 11 պետություն Մոսկվայում ստորագրել էին «Դիտորդների խմբի և խաղաղության ապահովման հավաքական ուժերի» ստեղծման մասին համաձայնագիրը, և ԵԱՀԽ-ն կարող էր օգտագործել այս ներուժը, հատկապես որ փաստաթուղթը ստորագրող մի շարք պետություններ ԵԱՀԽ անդամներ էին:

Որոշման մեկ այլ կետով նախատեսվում էր մարտի 24-ին Հելսինկիում նախարարների խորհրդի արտակարգ հանդիպում անցկացնել, որի նպատակն էր քննարկել ԼՂ հակամարտության կարգավորման ուղիները և դրանցում ԵԱՀԽ դերակատարությունը, որն ավելի իրատեսական էր, քան անհապաղ զինադադարի հաստատման մասին կետը:

Մարտի 14-ի որոշման համաձայն՝ ԵԱՀԽ նոր պատվիրակության, ինչպես նաև հետագայում ԵԱՀԽ գործող նախագահողի այցերին ու մարտի 24-ի նախարարների խորհրդի արտակարգ հանդիպման մասին կետերը, թերևս, միակն էին, որոնք իրագործվեցին:

Ըստ Մուրադ Մուրադյանի՝ ԵԱՀԽ երկրորդ պատվիրակության այցը, որը տեղի էր ունեցել ԱՊԿ մարտի 24-ի արտակարգ հանդիպումից անմիջապես առաջ, արդեն ուներ հստակ նպատակ՝ զինադադարի հաստատում այն դիտելով որպես բանակցությունների սկսման անհրաժեշտ նախապայման: Այս նպատակին հասնելու պատրվակով ԵԱՀԽ պատվիրակության ղեկավար Յան Կուբիսը Բաքվում հանդիպեց նույն առաքելությամբ տարածաշրջանում գտնվող Իրանի փոխարտգործնախարար Վայեզիի հետ, սակայն, զինադադարի հաստատման անհրաժեշտության վերաբերյալ համատեղ հայտարարությունից բացի, ոչ մի եական համագործակցություն չկայացավ:

Չնայած այն հանգամանքին, որ պաշտոնապես ԵԱՀԽ պատվիրակության նպատակն էր նախապատրաստել ԵԱՀԽ գործող նախագահողի այցը, հակված ենք կարծելու, որ Յան Կուբիսի գլխավորած պատվիրակության այցը Վայեզիի տարածաշրջանում գտնվելու ժամանակաշրջանում զուտ պատահականություն չէր, այլ հստակ ուղղվածություն ուներ՝ խանգարել իրանական միջնորդության հաջողությանը:

Կուբիսի պատվիրակության գեկույցից պարզ է դառնում, որ այդ ժամանակ կողմերից յուրաքանչյուրը կրակը դադարեցնելու իր պայմաններն էր առաջարկում, մասնավորապես, Ադրբեջանը կրակի դադարեցումը պայմանավորում էր Հայաստանից ԼՂՀ զինամատակարար-

րունների դադարեցմամբ, իսկ Հայաստանը՝ ապաշրջափակմամբ, չնայած հակամարտության բոլոր կողմերն էլ զինադադար հաստատելու իրենց ցանկության մասին էին հայտարարում, սակայն նրանցից և ոչ մեկը չէր հավատում երկրարատն զինադադարի հաստատմանը...

«Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի մարտի 24-ի նիստում որոշում ընդունվեց Լեռնային Ղարաբաղի հարցին նվիրված կոնֆերանս հրավիրել Մինսկում: Կոնֆերանսի նախագահ նշանակվեց Իտալիայի ներկայացուցիչ Մարիո Ռաֆաելին»,- գրված է ՀՀ ԱԳՆ Եվրոպայի բաժնի պատասխանատու Քրիստիան Տեր-Ստեփանյանի ՀՀ իշխանություններին ուղղված զեկուցագրում: Այնուհետև կարդում ենք. «Կոնֆերանսի մասնակից երկրներն են՝ Գերմանիան, ԱՄՆ-ն, Հայաստանը, Ադրբեջանը, Բելոռուսիան, Ֆրանսիան, Իտալիան, Ռուսաստանը, Շվեդիան, Չեխիայի ու Սլովակիայի հանրապետությունը և Թուրքիան, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները, որոնք Մինսկում հրավիրվելիք կոնֆերանսին պետք է մասնկցեն խորհրդաժողովի նախագահի հրավերով...»<sup>5</sup>: Նշված պետությունները, ինչպես նաև հետաքրքրված կողմերը հետագայում նախատեսվելիք կոնֆերանսն անցկացնելու վայրի անվանմամբ սկսեցին կոչել Մինսկի խումբ: Ըստ ամերիկյան մամուլի իր պատմության մեջ առաջին անգամ ԵԱՀԽ-ն պարտավորվում էր լուծել հակամարտությունը խաղաղության համաժողովի միջոցով:

Դեռևս մարտի 24-ի քննարկումների ժամանակ ի հայտ եկան հակամարտության նկատմամբ եվրոպական պետությունների մոտեցումների տարբերությունները. եթե Հունաստանի արտգործնախախարի կարծիքով ԵԱՀԽ-ն ճանաչելով ԽՍՀՄ ժառանգությունը, կնպաստեր հակամարտության խորացմանը, ապա Թուրքիայի ներկայացուցչի պնդմամբ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի տարածք է, իսկ Հայաստանը պատերազմ է մղում Ադրբեջանի տարածքում, ինչը հակասում է ՄԱԿ-ի և ԵԱՀԽ-ի սկզբունքներին: Չնայած դիրքորոշումների տարբերությանը, բոլոր երկրները համամիտ էին, որ հակամարտության կարգավորմանն ուղղված առաջին քայլը պետք է լիներ զինադադարի հաստատումը, սակայն հնչուն կոչերից այն կողմ ոչինչ չէր արվում:

Մարտի 24-ի որոշման մեջ հստակ երևաց Իրանի տարածաշրջանային դերը նվազեցնելու և նրա միջնորդական նախաձեռնությունը չեզոքացնելու ԵԱՀԽ մտադրությունը.

– ողջունելով ԵՄ, ԱՊՀ երկրների կողմից միջնորդական նախաձեռնությունները ոչ մի խոսք չկար իրանական նախաձեռնության մասին, կարծես թե այն ընդհանրապես գոյություն չուներ,

– հատուկ շեշտվում էր ԵԱՀԽ առաջատար դերը խաղաղարար գործընթացում և նրա պատրաստակամությունը՝ համագործակցելու ՄԱԿ-ի հետ հակամարտության կարգավորման գործընթացում: Եվս ոչ մի խոսք իրանական միջնորդական ջանքերի մասին:

Որոշման մեջ ընդգծվում էր ԵԱՀԽ առաջատար, բայց ոչ բացառիկ դերը կարգավորման գործընթացում, սակայն մատուցվեց այնպես, իբր թե ԵԱՀԽ-ին վերապահված է հենց բացառիկ դեր: Հակված ենք այս փաստը գնահատել որպես այլ նախաձեռնությունների ծախսողմանն ուղղված մտածված քայլ, քանզի, փաստորեն, մերժվում էր այլ նախաձեռնությունների գոյության և հաջողության հնարավորությունը՝ բացառիկ հռչակելով ԵԱՀԽ դերը, իսկ այնպիսի հեղինակավոր կազմակերպության փաստաթղթում, ինչպիսին ԵԱՀԽ-ն է, սման վրիպակները գուտ պատահականության արդյունք համարելը բավականին դժվար է:

Ինչպես տեսնում ենք, նախարարների մարտի 24-ի որոշման մեջ ոչ մի խոսք չկա Մինսկի խմբի ստեղծման կամ գործունեության սկզբունքների մասին, կա դրույթ, ըստ որի խաղաղության համաժողովը պետք է գումարվի Մինսկում: Չնայած այս հանգամանքին ուսումնասիրողների մի մասը հակված է Մինսկի խմբի մանդատ դիտարկել հենց մարտի 24-ի որոշումը: Ինչպես նշեցինք Վ.Կազիմիրովը Մինսկի խմբի գոյության միակ նպատակը համարում էր Մինսկի կոնֆերանսի բացմանն աջակցելը, որը նախատեսվում էր բացել հունիսի 21-ին, Բելառուսի մայրաքաղաքում: Մի մանդատի բացակայությունը Կազիմիրովը հակված էր գնահատել որոշ պետությունների ամբողջովին այլ նպատակներ հետապնդող քաղաքականություն: Մի-ում Ռուսաստանի նախկին ներկայացուցիչը խոստովանում է, որ իր գործունեության հենց սկզբից Ռուսաստանի և այդ խմբի անդամ մյուս պետությունների միջև հակասություններ գոյություն ունեին, նույնիսկ հակամարտող կողմերի հետ բանակցությունների ընթացքում առաջնային և երկրորդական հարցերի վերաբերյալ:

Նախարարների խորհրդի մարտի 24-ի նիստում բաց մնաց և հետագայում էլ իր վեջնական լիծումը չստացավ ԼՂ ներկայացուցիչների

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

կարգավիճակի հարցը. ըստ որոշման Մինսկի կոնֆերանսին պետք է հրավիրվեին «ԼՂ ընտրված և այլ ներկայացուցիչները» և, ինչպես վկայում է Սուրեն Ջոլյանը հետազայում, երբ որևէ հանդիպման մասնակցելու նպատակով ԼՂ պատվիրակության հրավիրման հարց էր առաջանում, ապա չէր հաջողվում պարզել, թե որոնք են «ընտրված» ներկայացուցիչները և որոնք են «այլ» ներկայացուցիչները: Ելնելով վերոշարադրյալից: կարելի է ենթադրել, որ ԼՂ պատվիրակության մասնակցությունը Մինսկի գործընթացի շրջանակներում ընթացող բանակցությունների ցանկացած պահին կարող էր հարցականի տակ դրվել, ինչը և տեղի ունեցավ մի քանի անգամ:

Նման հարցականներով լի սկզբի ունեցավ Մինսկի գործընթացը, որը սկզբից եթ սկսեց ակտիվ ճանապարհորդային դիվանագիտություն իրականացնել. տարածաշրջան էին ժամանում ԵԱՀԽ տարբեր մակարդակների պատվիրակություններ, որրոնցից, սակայն, ոչ մի օգուտ չկար:

Նախ, ապրիլի սկզբին կայացավ ԵԱՀԽ գործող նախագահող Իժի Դինստբիրի գլխավորած պատվիրակության այցը Երևան, ԼՂ և Բաքու: Այդ այցելության արդյունքում Դինստբիրին հակամարտող կողմերի բարձրագույն ղեկավարներն անձամբ ներկայացրին իրենց իրարամերձ դիրքորոշումները: Քիչ հավանական է, որ ԵԱՀԽ գործող նախագահողը, հատկապես հակամարտության զուտի այցելելու պահին, տեղյակ չլիներ հակամարտող կողմերի դիրքորոշումներին: Փաստորեն, այս այցը զուտ ձևական բնույթ էր կրում և Մինսկի գործընթացի շրջանակներում ընթացող բանակցություններին ոչ մի օգուտ չտվեց: Ավելի ուշ տարածաշրջան ժամանեց Միս պավիրակությունը՝ Մարիո Ռաֆայելիի գլխավորությամբ՝ տեղում կրակի դադարեցման հնարավորությունները ուսումնասիրելու և հետագա կարգավորման առնչությամբ առաջարկություններ պատրաստելու նպատակով: Պատվիրակությունը վերադառնալուն պես զեկուցագիր պատրաստեց, որը նույնպես, նախորդների նման, ոչ մի հետևանք չունեցավ:

Բանակցությունները դժվարանում էին նաև Ադրբեջանում տիրող ներքին անկայուն իրավիճակի պատճառով: Իշխանության էին գալիս հակամարտության կարգավորման ռազմական

տարբերակը նախընտրող ուժերը, որոնց մասնակցությունը բանակցություններին ձևական էր: Այդ պատճառներով եվրոպական մայրաքաղաքներում ընթացող տարբեր մակարդակների քննարկումները և դրանց արդյունքում ընդունած որոշումները ապարդյուն էին դառնում: Լեռնային Ղարաբաղը շարունակում էր մնալ ծանր կացության մեջ՝ շրջապատված բոլոր կողմերից: Իրավիճակը տարածաշրջանում կտրուկ փոփոխվեց Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև ցամաքային կապի հաստատելուց հետո: Ստեղծված պայմաններում ԵԱՀԽ-ին անհրաշետ էր հակամարտության կարգավորման նոր մոտեցումներ մշակել հակամարտության գոտում նոր իրավիճակին համապատասխան:

Նմանատիպ մոտեցումներ մշակելու ԵԱՀԽ անպատրաստությունը երևաց 1992 թ. մայիսի 21-ի ԱՊԿ նիստում, երբ ԱՄՆ ներկայացուցիչ Ջոն Մարտեսկան առաջարկեց մի բանաձև ընդունել, որով նախատեսվում էր Մինսկի համաժողովի անդամ-երկրների արտակարգ հանդիպում հրավիրել: Որոշման ընդունումը կանխվեց Հայաստանի կողմից, քանի որ այն պահանջում էր Ադրբեջանի տարածաշրջանի անբողջականության պահպանում: Ի պատասխան Ադրբեջանը առաջարկեց Մինսկի գործընթացի շրջանակներում որոշումներն ընդունել «կոնսենսուս-մի-նուս-մեկ» սկզբունքով, ցանկանալով միջազգայնորեն հաստատել ԼՂ-ի պատկանելությունը Ադրբեջանին: Այս առաջարկությամբ, բացի Հայաստանից, դեմ արտահայտվեցին Ֆրանսիան և Յունաստանը, ըստ երևույթին ԵԱՀԽ կառույցներին բնորոշ քվեարկության կարգը անփոփոխ պահպանելու նպատակով: Ադրբեջանը, գտնվելով ներքին և արտաքին շատ ծանր դրության մեջ, Մինսկի գործընթացին իր մասնակցությունը պայմանավորեց հակահայաստանյան հայտարարության ընդունմամբ: Որպես փոխզիջումային տարբերակ որոշվեց որ ոչ մի որոշում այդ հարցով չի ընդունվի, այլ հունիսի առաջին շաբաթվա ընթացքում Մինսկի կոնֆերանսի մասնակից երկրների արտահերթ նիստ գումարելու մասին դրույթը կմտցվի ԱՊԿ 11-րդ հանդիպման եզրափակիչ փաստաթղթերի մեջ՝ որպես չընդունված փաստաթուղթ, որին կկցվեն նաև անդամ-երկրների հայտարարությունները:

Ի վերջո նման հանդիպում տեղի ունեցավ հունիսի 1-ին, դրանով սկիզբ դրվեց նմանատիպ տասնյակ հանդիպումների, որոնց արդյունքում և կազմավորվեց Մինսկի խումբը:

Այսպիսի զարգացումների և ռազմական

գործողությունների արդյունքում խիստ նվազեց արդեն «Մինսկի խումբ» անունը ստացած ԵԱՀԽ կառուցվածքային մարմնի դերը, որը դարձավ անդամ երկրների տարաբնույթ շահերի բախման թատերաբեմ: Մինսկի խմբի գործունեության դերի նվազման մասին է խոսում թեկուզ այն փաստը, որ 1992թ. հունիսի 21-ին նախատեսված Մինսկի խաղաղության կոնֆերանսը մինչև այժմ չի կայացել, դրա փոխարեն 1992 թ. ամռանը Հոռոմուն տեղի ունեցան 5 փուլով բանակցություններ, որոնք ոչ մի արդյունք չտվեցին, քանի որ այդ հանդիպումները ժամանակավորապես էին, և դրանց ընթացքում քննարկվող հարցերը հակամարտության գոտում տեղի ունեցող գործընթացներին չէին համապատասխանում:

Ընդհանրապես Մինսկի գործընթացը հենց սկզբից ձեռք բերեց որոշ առանձնահատկություններ, որոնք, մեր համոզմամբ, զգալի բացասական ազդեցություն ունեցան ամբողջ գործընթացի վրա, ուստի և հարկ ենք համարում մանրամասն անդրադառնալ այդ առանձնահատկություններին:

— նախ, փաստորեն, ԼՂՀ-ն հենց սկզբից անտեսվեց որպես բանակցությունների լիիրավ կողմ, և դրանով իսկ որոշ չափով կանխորոշվեց ԼՂ կարգավիճակը՝ բանակցությունների ավարտական փուլում,

— որքանով էր արդարացված Մինսկի գործընթացում այդքան մեծ քանակությամբ երկրների ներգրավումը: Երկրներ, որոնք անձանոթ էին տարածաշրջանի պատմությանը, այնտեղ տիրող իրավիճակին, հատկապես ազգամիջյան հարաբերություններին: Մեր ընդդիմախոսները կարող են փաստարկներ բերել, թե նրանց անտեղյակությունը տարածաշրջանային զարգացումներին պետք է ապահովեր այդ երկրների անաչառությունը, սակայն եթե մի պահ համաձայնենք, որ այդպես է, ապա ինչո՞ւ գործընթացում ընգրկվեցին նաև տարածաշրջանում ավանդական շահեր ունեցող երկրները, արդյո՞ք ԵԱՀԽ Մինսկի համաժողովի այս ֆորմատը նպաստեց հիմնախորի լուծմանը,

— նախորդ կետին առնչվող ևս մեկ հարց է առաջանում. որքանով էր նպատակահարմար Մինսկի գործընթացում որպես միջնորդ Թուրքիայի ներգրավումը. լինելով զինված բախումը անմիջականորեն հրահրողներից և այնուհետև դրա անմիջական մասնակիցներից մեկի ռազմավարական դաշնակիցը<sup>10</sup> Թուրքիան չուներ անկողմնակալ մոտեցում և, հետևաբար, չէր կարող հանդես գալ որպես անաչառ միջնորդ,

— ԵԱՀԽ-ն ձեռնամուխ եղավ իր հաշտարար գործունեությանը երկու իրարամերձ երկրների տարածքային ամբողջականության և ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքներով: Երկու սկզբունքներն էլ առաջնային էին հռչակված և պարզ չէր թե որ սկզբունքին է նախապատվություն տրվելու դարաբաղյան հիմնախնդրի պարագայում: Սա պատճառ եղավ, որպեսզի ԵԱՀԽ ներկայացուցիչները ՄԱԿ-ի և ԵԱՀԽ հիմնարար փաստաթղթերի մեջ տեղ գտած սկզբունքները մեկնաբանեն իրենց անձնական տեսանկյունից, որը բազմաթիվ բարդությունների տեղիք էր տալիս,

— ԵԱՀԽ-ն ընտրել էր գործունեության մի ուղի, որն արդեն ապացուցել էր իր անարդյունավետությունը ԽՍՀՄ ժամանակաշրջանում. տեղում հարցերը պարզելու և օպերատիվորեն լուծելու փոխարեն, այն նախընտրում էր տարածաշրջան կարճաժամկետ այցերի ընթացքում իրագործել եվրոպական մայրաքաղաքներում կայացված որոշումները: ԽՍՀՄ իշխանությունները նմանատիպ քաղաքականություն իրականացելիս ունեին իրավիճակին ազդելու տարաբնույթ միջոցներ, որոնք ԵԱՀԽ պարագայում ի սպառ բացակայում էին, և դժվար թե իրագործման հստակ կառուցակարգերի բացակայության պայմաններում իրավիճակի բարելավմանը ուղղված ԵԱՀԽ որևէ որոշում կյանքի կոչվեր,

— եթե ԱՊԿ փետրվարի 28-ի որոշման իրագործման համար հստակ կառուցակարգեր սահմանվեին, ապա ընդհանրապես այլ որոշումների անհրաժեշտություն չէր լինի, քանի որ այդ որոշումը ի վիճակի էր բարելավել իրավիճակը և հակամարտող կողմերին, նույնիսկ ԼՂ չհստակեցված կարգավիճակով հանդերձ, նստեցնել բանակցությունների սեղանի շուրջ արդեն իսկ հաստատված զինադադարի պայմաններում: Ինչպես երևաց ժամանակի ընթացքում, թե՛ դարաբաղյան հիմնախնդրով ԵԱՀԽ առաջին որոշումը, թե՛ հետագա որոշումները մնացին թղթի վրա, և դրանց իրագործման ուղղությամբ ոչ մի էական քայլ չարվեց,

— ինչպես խոստովանում էին իրենք՝ Մինսկի գործընթացի սկզբնական փուլի դերակատարները, Մինսկի կոնֆերանսի մի քանի անդամ-երկիր ոչ իրավասու ներկայացուցիչներ էին նշանակել<sup>11</sup>: Գործընթացի հենց սկզբից հայերը մեղադրում էին կոնֆերանսի նախագահող Մարիո Ռաֆայելիին կողմնապահության մեջ, ինչն, անկասկած, արգելակում էր խաղաղ գործընթացը,

— ինչպես մշել ենք վերևում, Մինսկի

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ**

գործընթացի անդամ երկրների միջև համաձայնություն չկար նույնիսկ հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերի առաջնայնության հարցում. եթե Ռուսաստանը առաջնային էր համարում հակամարտության զոտում կրակի դադարեցումը և զինադադարի հաստատումը, ապա ԱՄՆ-ի համար առաջնային էր ռազմական գործողությունների կարգավորումը և բանակցությունների անընդհատելիությունը:

Եզրափակելով կցանկանկայինք ընդգծել, որ ԵԱՀԽ նախաձեռնած միջնորդական նախաձեռնությունը հենց սկզբնական փուլում թերի էր

նախևառաջ հիմնախնդրի լուծման հստակ սկզբունքների և կառուցակարգերի բացակայության պատճառով: Միջնորդությունը նախաձեռնվեց մեկ այլ, առավել հեռանկարային միջնորդությանը զուգընթաց և հակամարտության շուտափույթ լուծման հասնելու նպատակով Իրանի հետ համագործակցելու փոխարեն, ընդհակառակ՝ ԵԱՀԽ-ն նպաստեց այդ միջնորդության ձախողմանը:

Նշված թերություններով հանդերձ, ԵԱՀԽ-ն, այնուամենայնիվ, հաջողության հասնելու մեծ հավանականություն ուներ, սակայն հետագայում Մինսկի խմբի անդամ երկրների շահերի բախման պատճառով, ամբողջ Մինսկի գործընթացն անարդյունավետ դարձավ:

1. Contested borders in the Caucaus, UN and CSCE policies in Transcaucasia, Oliver Paye and Eric Remacle, Internet Version.
2. Interim Report of the CSCE Repporteur Mission on the Situation in Nagorno-Karabagh, considered on 28 February by CSO of the CSCE, agenda item 3.
3. Վ.Կազիմիրովի ելույթի դրույթները Լոկկու-մում (Գերմանիա) տեղի ունեցած սեմինարին, մայիս 2001 թ.:
4. Moorad Mooradian, Third party mediations and missed opportunities in Nagomo-Karabakh: A Design for possible Solution. George Mason University, Virginia, USA, 1996, էջ 364:
5. ՀՀ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցչության

- ընթացիկ արխիվ:
6. The Washington Times, 25.03.1992.
7. The third party... էջ 409:
8. Վ.Կազիմիրովի ելույթի դրույթները Լոկկու-մում (Գերմանիա) տեղի ունեցած սեմինարին, մայիս 2001 թ.:
9. Սուրեն Զոլյանի հետ զրույցի գրառում:
10. 1998թ. հոկտեմբերի 29-ին «ԱՐՄԵՆՊՐԵՍ»-ի հաղորդագրությունը Թուրքական հանրապետության 75-ամյակին նվիրված տոնակատարությունների մասին, ուր նշվում է, որ Ադրբեջանը և Թուրքիան դարավոր դաշնակիցներ են և Թուրքիան ամեն տեսակի օգնություն է ցույց տվել և ցույց կտա Ադրբեջանին:
11. John Maresca interview to CSM, June 1994.

Արշակ  
ԵՊՀ քրե  
/խտիկա

**Յ** այ  
վս  
հն  
կան օրե  
ընտրու  
ցաքննու  
վաններ  
վաակա  
քննիչի  
Հնար  
հնարավ  
իրադրու  
յան հիմ  
նշանակ  
սին ճզ  
նպատա  
վում է  
րություն  
ա) ա  
բ) կ  
յամբ,  
գ) կր  
ԱՆկ  
նում են  
տակներ  
նալ ճշ  
ցաքննվ  
նում են  
ցություն  
Մյու  
ակնհայ  
բացահ  
Դրանց  
քննիչի  
ցուցնու  
նով:  
Կոն  
այն ժա  
հանցա